

Պ-175-11.12.2012,02.04.2013-ԱԱ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ
ՄԱՆԿԱԿԱՆ ՄՆԵՂԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԳԼՈՒԽ I
ԸՆՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են երեխաներին կրծքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության՝ արտադրության, պիտակավորման, վաճառքի, բաշխման, գովազդի, ինչպես նաև դրանց մասին իրազեկման և տեղեկությունների տարածման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքի նպատակը

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել մանուկների և վաղ տարիքի երեխաների առողջ և անվտանգ սնուցումը՝ կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության կարգավորման միջոցով:

Հոդված 3. Օրենքի խնդիրները

1. Սույն օրենքի խնդիրներն են՝

1) խրախուսել և պաշտպանել կրծքով կերակրումը՝ որպես օպտիմալ և այլընտրանք չունեցող միջոց մանուկների և վաղ տարիքի երեխաների անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու համար.

2) խրախուսել ժամանակին և համապատասխան հավելյալ սնուցման ապահովումը.

3) իրազեկել հանրությանը՝ ներառյալ հղիներին, նրանց ընտանիքներին և երեխաներին խնամողներին, կրծքով կերակրման առավելությունների, կրծքի կաթի փոխարինիչների օգտագործման և ոչ ճիշտ օգտագործման հետ կապված առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների և ռիսկերի վերաբերյալ՝ տրամադրելով համապատասխան, ճշգրիտ և հասանելի տեղեկատվություն.

4) խրախուսել ու աջակցել մայրերի, մանուկների և վաղ տարիքի երեխաների համար բարյացակամ միջավայրի ապահովումն առողջապահական կազմակերպություններում, հասարակական վայրերում և աշխատավայրերում.

5) միջազգային չափանիշներին համապատասխանեցնել կրծքով կերակրման խրախուսման ու մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության հետ կապված օրենսդրությունը.

6) խրախուսել և պաշտպանել կրծքով կերակրումը՝ որպես աղքատության հաղթահարման արդյունավետ միջոց:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) կրծքով կերակրման խրախուսում՝ միջոցառումներ ուղղված մանուկներին և վաղ տարիքի երեխաներին մայրական կաթով կերակրմանը.

2) մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառություն՝ մանկական սննդի և հարակից ապրանքների արտադրություն, պիտակավորում, վաճառք, բաշխում, գովազդ, ինչպես նաև դրանց մասին իրազեկման և տեղեկությունների տարածում.

3) մանկական կաթնախառնուրդ՝ արդյունաբերական եղանակով մշակված, կենդանական կամ բուսական ծագում ունեցող կաթ կամ կրծքի կաթի փոխարինիչ, որը նախատեսված է մանուկների կերակրման համար՝ սկսած ծննդյան պահից մինչև 6 ամսական տարիքը.

4) վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդ՝ արդյունաբերական եղանակով մշակված, կենդանական կամ բուսական ծագում ունեցող կաթ կամ կրծքի կաթի փոխարինիչ, որը նախատեսված է 6 ամսականից բարձր տարիքի մանուկների և վաղ տարիքի երեխաների կերակրման համար.

5) հավելյալ սնունդ՝ 6 ամսականից բարձր մանուկների և վաղ տարիքի երեխաների սնունդ, նախատեսված ի հավելումն կրծքի կաթի կամ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների օգտագործմանը.

6) լրացուցիչ սնունդ՝ բժշկական ցուցումներով կամ մայրական կաթի անբավարարության դեպքում մանուկների և վաղ տարիքի երեխաների համար նախատեսված կաթ կամ կրծքի կաթի փոխարինիչներ.

7) մանկական սնունդ՝ մանուկների և վաղ տարիքի երեխաների համար նախատեսված սնունդ, որը ներառում է մանկական կաթնախառնուրդը, վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդը և հավելյալ սնունդը.

8) հարակից ապրանքներ՝ մանկական սնունդը սպառողին հասցնելու և (կամ) երեխային կերակրելու համար նախատեսված միջոցներ և պարագաներ, այդ թվում՝ կերակրման շշեր և երեխաներին կերակրելու կամ հանգստացնելու նպատակով օգտագործվող արհեստական ծծակներ.

9) մանուկ՝ մինչև 12 ամսական երեխա.

10) վաղ տարիքի երեխա՝ 12 ամսականից մինչև 3 տարեկան (36 ամսական) երեխա.

11) արտադրող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը զբաղվում է մանկական սննդի և հարակից ապրանքների արտադրությամբ.

12) բաշխող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը զբաղվում է մանկական սննդի և հարակից ապրանքների մեծածախ և (կամ) մանրածախ վաճառքով և դրանց սպառման խրախուսմամբ.

13) մանկական սննդի և հարակից ապրանքների խրախուսում՝ մանկական սննդի և հարակից ապրանքների սպառման ուղղակի կամ անուղղակի նպատակաուղղված գործունեություն.

14) մանկական սննդի և հարակից ապրանքների նմուշ՝ խրախուսման նպատակով մանկական սննդի և հարակից ապրանքների անվճար տրամադրվող մեկ միավոր կամ փոքր քանակություն.

15) մանկական սննդի և հարակից ապրանքների պիտակ՝ նշագրում, նշան, պատկերավոր կամ այլ նկարագրական նյութ՝ գրված, տպված, զարդանախշված, տրաֆարետով ներկված, դրոշմված, քանդակադրոշմված, որը փակցված է կամ այլ ձևով հանդես է գալիս մանկական սննդի և հարակից ապրանքների վրա.

16) նորածիններին բարյացակամ ծառայություններ՝ առողջապահական կազմակերպություններում հղի կանանց, մայրերի և մանուկների խնամքի, զարգացմանը և կրճքով կերակրմանը նպաստելուն ուղղված միջոցառումներ.

17) առողջապահական կազմակերպություն՝ առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող կազմակերպություն:

ԳԼՈՒԽ II

ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ, ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 5. Կրճքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները

1. Կրճքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

1) մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու նպատակով՝ կրճքով կերակրման խրախուսման ազգային ծրագրի հաստատումը.

2) կրճքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում միջգերատեսչական համագործակցության ապահովումը.

3) մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդներից նմուշ վերցնելու, փորձաքննություն անցկանելու և կաթնախառնուրդների գրանցման կարգի հաստատումը.

4) սույն ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման համար միջոցների ձեռնարկումը:

Հոդված 6. Կրճքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում լիազոր մարմնի իրավասությունները

1. Կրճքով կերակրման խրախուսման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) իրավասություններն են՝

1) կրճքով կերակրման խրախուսման ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, վերահսկողությունը և մշտադիտարկումը.

2) կրճքով կերակրման խրախուսման ոլորտում, օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, պատասխանատվության կիրառումը.

3) մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցումը:

2. Մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

2) մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, վերահսկողությունը և մշտադիտարկումը.

3) սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության հետ կապված, նորմատիվ իրավական ակտերի ընդունումը.

4) մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում, օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, պատասխանատվության կիրառումը:

ԳԼՈՒԽ III

ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՍՄԱՆ, ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 7. *Կրճքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը*

1. Կրճքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում են լիազոր մարմինները՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ IV

ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՍՄԱՆ

Հոդված 8. *Կրճքով կերակրման խրախուսման Ազգային ծրագիրը*

1. Կրճքով կերակրման խրախուսման ազգային ծրագրով սահմանվում են՝

1) կրճքով կերակրման քարոզչությանն ուղղված միջոցառումները.

2) կրճքով կերակրման տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը.

3) կրճքով կերակրման խրախուսման վերաբերյալ բուժաշխատողների կրթմանն ուղղված միջոցառումները.

4) առողջապահական կազմակերպություններում նորածիններին բարյացակամ ծառայությունների տրամադրումը.

5) կերակրող մայրերի և նրանց երեխաների համար նախատեսված նպաստավոր պայմանների ստեղծումը.

6) հանրային իրազեկվածության բարձրացումը՝ ներառյալ հղիներին և նրանց ընտանիքներին.

7) միջգերատեսչական համագործակցությունը:

Հոդված 9. Կրճքով կերակրման երեխայի իրավունքը

1. Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի՝

1) ստանալու կրճքով կերակրում, որպես օպտիմալ և այլընտրանք չունեցող միջոց անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ստանալու համար.

2) զերծ մնալու կճքով կերակրումից՝ բժշկական հակացուցումների առկայության դեպքում, որոնց ցանկը հաստատվում է առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից.

3) ֆիզիոլոգիական պահանջներից ելնելով՝ 6 ամսականից ստանալու հավելյալ սնունդ, իսկ բժշկական ցուցումներով՝ լրացուցիչ սնունդ: Հավելյալ և լրացուցիչ սնունդ ստանալու մեթոդական ուղեցույցները հաստատվում են լիազոր մարմնի կողմից:

2. Պետությունը միջոցներ է ձեռնարկում կրճքով կերակրումը խրախուսելու, կրճքով կերակրում իրականացնող կանանց և երեխաների իրավունքները պաշտպանելու համար:

Հոդված 10. Կրճքով կերակրում իրականացնող կանանց իրավունքները

1. Կրճքով կերակրում իրականացնող կինն իրավունք ունի՝

1) ունենալու համապատասխան պայմաններ աշխատավայրերում, քրեակատարողական հիմնարկներում, առողջապահական կազմակերպություններում և այլ հասարակական վայրերում կրճքով կերակրում իրականացնելու համար.

2) ստանալու տեղեկատվություն կրճքով կերակրման առավելությունների, ինչպես նաև մանուկների և վաղ տարիքի երեխաների առողջ և անվտանգ սնուցման վերաբերյալ.

3) ստանալու կրճքով կերակրման ապահովման հետ կապված անվճար բժշկական խորհրդատվություն:

ԳԼՈՒԽ V

ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 11. Մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքը

1. Արգելվում է՝

1) առողջապահական կազմակերպությունների կողմից մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքը.

2) համապատասխանության գնահատում չանցած կամ պիտանելիության ժամկետանց մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքը.

3) մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող սննդամթերքը վաճառել կամ ներկայացնել որպես պիտանի 6 ամսականից փոքր մանուկների կերակրման համար.

4) մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքը՝ լիազոր մարմնի կողմից սահմանված պահպանման համապատասխան պայմաններ չունեցող առևտրի օբյեկտի, սպառողական ապրանքների շուկայի, շրջիկ առևտրի կետի և առևտրի կենտրոնի կողմից:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների խախտումն առաջացնում է Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Հոդված 12. Մանկական սննդի և հարակից ապրանքների գովազդը և խրախուսումը

1. Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, հարակից ապրանքների և մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի գովազդը և (կամ) խրախուսման այլ ձևերը արգելվում են:

2. Խրախուսման արգելված ձևերն ընդգրկում են՝

1) գովազդը.

2) զեղչային հնարքները, ինչպիսիք են՝ հատուկ ցուցահանդես-վաճառքները, շնորհանդեսները, շահումները, պարգևների, մրցանակների, նվերների շնորհումը, զեղչի կտրոնների կիրառումը և սպառման ավելացմանն ուղղված խրախուսման ցանկացած այլ հնարք, իջեցված գներով վաճառքը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ իջեցված գներով վաճառքը բխում է արտադրողի կամ բաշխողի գնային քաղաքականությունից և ուղղված է գների երկարատև իջեցմանը.

3) մանկական սննդի և հարակից ապրանքների նմուշների տրամադրումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

3. Հավելյալ սննդի գովազդը թույլ է տրվում միայն այն դեպքերում, եթե՝

1) այդ գովազդը տեղի չի ունենում առողջապահական կազմակերպություններում.

2) հավելյալ սնուցման մասին տրամադրվող ցանկացած տեղեկություն խրախուսում է բացառապես կրճքով կերակրումը կյանքի առաջին 6 ամիսների ընթացքում և շարունակական կրճքով կերակրումը մինչև երկու տարեկան հասակը:

Հողված 13. Արտադրողների և բաշխողների կողմից խրախուսման արգելքը

1. Մանկական սննդի և հարակից ապրանքների խրախուսումն արտադրողների և (կամ) բաշխողների կողմից արգելվում է:

2. Արտադրողի և (կամ) բաշխողի կողմից արգելվում են խրախուսման հետևյալ եղանակները՝

1) բուժաշխատողներին կամ առողջապահական կազմակերպություններին մանկական սնունդ և հարակից ապրանքներ նվիրելը կամ դրանք տրամադրելը հայտարարված մեծածախ գնից կամ մեծածախ գնի բացակայության դեպքում՝ մանրածախ գնի ութսուն տոկոսից ցածր գնով, բացառությամբ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթների.

2) մանկական սննդի և հարակից ապրանքների օգտագործման խրախուսման նպատակով առողջապահական կազմակերպությանն անվճար սարքավորումներ, պարագաներ տրամադրելը կամ ծառայություններ մատուցելը.

3) բուժաշխատողներին և առողջապահական կազմակերպություններին նվերներ՝ այդ թվում գրիչներ, օրացույցեր, պաստառներ, հուշատետրեր, նոթատետրեր, հասակաչափեր, մանկան աճի կամ զարգացման գրաֆիկներ, խաղալիքներ տրամադրելը.

4) բուժաշխատողներին կամ բուժաշխատողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններին կամ արհեստակցական միություններին դրամական հատկացումներ տրամադրելը կամ առաջարկելը (նվիրատվություններ, հոնորարներ մատուցված ծառայությունների համար, գիտահետազոտական աշխատանքների անցկացման դիմաց հատուցումներ, հետազոտական դրամաշնորհներ կամ հանդիպումների, սեմինարների, շարունակական ուսուցողական դասընթացների կամ գիտաժողովների հետ կապված դրամային հատկացումներ և այլն).

5) հղի կանանց կամ կերակրող մայրերի, մանուկների և վաղ տարիքի երեխաների ծնողների կամ նրանց ընտանիքների անդամների համար ծնելիության, հղիության, երեխայի ծննդի և սնուցման հետ առնչվող իրադարձություններ, միջոցառումներ, մրցույթներ, խորհրդատվական հեռախոսագծերի գործունեություն կամ արշավներ հովանավորելը.

6) մանուկների և վաղ տարիքի երեխաների սնուցման հետ առնչվող տեղեկատվական կամ ուսուցողական նյութերի տրամադրումը, տարածումը, ուսուցողական գործունեության ծավալումը՝ բացառությամբ լիազոր մարմնի հետ համաձայնեցված, մանկական սննդի և հարակից ապրանքների հատկանիշերի գիտական ասպեկտներին կամ օգտագործման եղանակներին վերաբերող տեղեկատվության տրամադրումը:

Հողված 14. Բուժաշխատողների կողմից մանկական սննդի վաճառքի և խրախուսման արգելքը

1. Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում ընդգրկված բուժաշխատողներին արգելվում է՝

1) մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքով, իրացման, գովազդի կամ խրախուսման այլ ձևերով զբաղվելը.

2) արտադրողից և (կամ) բաշխողից, կամ նրանց անունից հանդես եկող այլ կազմակերպությունից որևէ նվեր, շնորհ կամ պարգև՝ դրամական կամ որևէ այլ տեսքով ընդունելը.

3) մանկական սննդի և հարակից ապրանքների նմուշներ ընդունելը կամ տրամադրելը.

4) մանկական սննդի օգտագործման ցուցադրելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մանկական կաթնախառնուրդով կերակրելն անհրաժեշտ է ելնելով բժշկական ցուցումներից կամ եթե մայրն ընտրել է մանկական սննդով կերակրումը:

Հոդված 15. Մանկական սննդի և հարակից ապրանքների անվճար կամ ցածր գներով տրամադրումը

1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով մանկական սնունդը և հարակից ապրանքներն անվճար կամ ցածր գներով կարող են տրամադրվել՝

1) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար.

2) բժշկական ցուցումներով հատուկ սնուցողական պահանջներ ունեցող երեխաների համար.

3) մայրական կաթով կերակրման բժշկական հակացուցումների դեպքում:

ԳԼՈՒԽ VI

**ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ՊԻՏԱԿՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Հոդված 16. Մանկական սննդի պիտակներին ներկայացվող պահանջները

1. Մանկական սննդի պիտակները պետք է հայերենով և ընթեռնելի տառաչափով պարունակեն հետևյալ տեղեկատվությունը.

1) պատրաստման և օգտագործման հրահանգներ՝ բառերով և պատկերներով.

2) երեխաների տարիքային խումբը թվանշաններով, որոնց համար նախատեսված է մանկական սնունդն, ընդ որում հավելյալ սնուցման համար նախատեսված դեպքերում նշված տարիքը չպետք է փոքր լինի 6 ամսականից.

3) նախազգուշացում ոչ ճիշտ պատրաստման և այլ տարիքի երեխայի կերակրման հետ կապված առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների և ռիսկերի մասին.

4) բաղադրությունը և կաթի կամ կրծքի կաթի փոխարինիչի ծագումը.

5) պահպանման պայմանները նախքան բացելը և դրանից հետո.

6) խմբաքանակի համարը, արտադրման ամսաթիվը և պիտանելիության ժամկետը.

7) արտադրողի և (կամ) բաշխողի անվանումը, գտնվելու վայրը և կապի միջոցները.

8) մանուկների և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների պիտակները պետք է պարունակեն լիազոր մարմնի կողմից սահմանված ոչ ճիշտ օգտագործման վերաբերյալ նախազգուշացման տեքստ.

9) վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների պիտակները պետք է պարունակեն նախազգուշացում այն մասին, որ կաթնախառնուրդը չպետք է օգտագործվի 6 ամսականից փոքր մանուկների համար.

10) մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների պիտակները պետք է պարունակեն «ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ» բառերը և ստորև հետևյալ տեքստը մեծատառերով. «ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ Է: ԿՐԾՔԻ ԿԱԹԸ ԿԱՏԱՐՅԱԼ ՄՆՈՒՆԴ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՈՈՂՋ ԱՃԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ: ԱՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՓՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ»: Նշումը պետք է զբաղեցնի պիտակի ծավալի ոչ պակաս քան քսան տոկոսը:

2. Արգելվում է՝

1) մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների պիտակների վրա տեղադրել կրծքով կերակրումը նսեմացնող կամ արհեստական սնուցումը գովաբանող բովանդակությամբ որևէ տեքստ.

2) մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների պիտակների վրա տեղադրել «մայրականացված», «մարդկայնացված» կամ կրծքի կաթի հետ որևէ համեմատություն ենթադրող արտահայտություններ.

3) մանկական սննդի պիտակների վրա տեղադրել երեխայի նկարներ.

4) մանկական սննդի պիտակների վրա տեղադրել դրանց պատրաստման եղանակների լուսաբանման հետ առնչություն չունեցող լուսանկարներ, նկարներ կամ այլ գրաֆիկական պատկերներ.

5) մանկական սննդի պիտակների վրա տեղադրել ցանկացած գրառում, որը հավաստիացնում կամ հնարավոր է համարում կապը տվյալ արտադրանքի կամ նրա բաղադրիչ մասերի և առողջության, աճի կամ զարգացման միջև.

6) մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող սննդամթերքի պիտակների արտաքին տեսքի և (կամ) ձևավորման նմանեցումը մանկական կաթնախառնուրդների պիտակներին.

7) սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող պիտակավորմամբ մանկական սննդի վաճառքը կամ այլ կերպ իրացումը:

3. Սույն օրենքի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է մանկական սննդի պիտակներին ներկայացվող լրացուցիչ պահանջներ:

Հոդված 17. Հարակից ապրանքների պիտակներին ներկայացվող պահանջները

1. Հարակից ապրանքների պիտակները պետք է հայերենով և ընթեռնելի տառաչափով պարունակեն հետևյալ տեղեկատվությունը՝

1) «ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ» բառերը և ստորև հետևյալ տեքստը մեծատառերով. «ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ Է: ԿՐԾՔԻ ԿԱԹԸ ԿԱՏԱՐՅԱԼ ՄՆՈՒՆԴ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՈՈՂՋ ԱՃԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ: ԱՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՓՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՅԼ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ»: Նշումը պետք է զբաղեցնի պիտակի ծավալի ոչ պակաս քան քսան տոկոսը.

2) լիազոր մարմնի կողմից սահմանված ոչ ճիշտ օգտագործման վերաբերյալ նախազգուշացման տեքստ.

3) լվացման և ախտահանման հրահանգներ՝ բառերով և պատկերներով.

4) արտադրողի և բաշխողի անվանումը, գտնվելու վայրը և կապի միջոցները:

2. Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող պիտակավորմամբ հարակից ապրանքների վաճառքը կամ այլ կերպ իրացումն արգելվում է:

3. Սույն օրենքի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է հարակից ապրանքներին ներկայացվող լրացուցիչ պահանջներ:

ԳԼՈՒԽ VII

ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 18. Առողջապական կազմակերպությունների պարտականությունները

1. Առողջապական կազմակերպությունները պարտավոր են ապահովելու կրծքով կերակրման համար բարյացակամ միջավայր, այդ թվում՝

1) խրախուսել ու աջակցել կրծքով կերակրումը՝ որպես օպտիմալ և այլընտրանք չունեցող միջոց մանուկների և վաղ տարիքի երեխաների անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու համար.

2) խրախուսել ժամանակին և համապատասխան հավելյալ սնուցման կազմակերպումը.

3) պահպանել սույն օրենքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կրծքով կերակրման կանոնները և պարբերաբար իրազեկել նշված կանոնների վերաբերյալ բժշկական անձնակազմին.

4) իրազեկել հանրությանը՝ ներառյալ հղիներին, նրանց ընտանիքներին և երեխաներին խնամողներին, կրծքով կերակրման առավելությունների և գործնական հմտությունների, կրծքի կաթի փոխարինիչների օգտագործման և ոչ ճիշտ օգտագործման հետ կապված առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների և ռիսկերի վերաբերյալ՝ տրամադրելով համապատասխան, ճշգրիտ և հասանելի տեղեկատվություն.

5) իրականացնել կրծքով կերակրման համար անհրաժեշտ գործնական հմտությունների դասընթաց բուժանձնակազմի համար.

6) մանկական սնունդ արտադրողներին և բաշխողներին չտրամադրել հղիների և կերակրող մայրերի կոնտակտային տվյալներ:

2. Մանկական սնունդ արտադրողների և (կամ) բաշխողների կողմից ցանկացած առաջարկի դեպքում (նմուշ, նվեր կամ այլ շնորհ) կամ սույն օրենքի նորմերի այլ խախտումների դեպքում, առողջապահական կազմակերպությունները պարտավոր են տեղեկացնել լիազոր մարմինին:

Հոդված 19. Բուժաշխատողների պարտականությունները

1. Բուժաշխատողները պարտավոր են՝

1) հղիների, ծննդկանների և նրանց հարազատների հետ հանդիպումների ժամանակ խրախուսել կրծքով կերակրումը, որպես օպտիմալ և այլընտրանք չունեցող միջոց՝ մանուկների և վաղ տարիքի երեխաների անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու համար.

2) ժամանակին գնահատել և խրախուսել համապատասխան հավելյալ սնուցման կազմակերպումը.

3) պահպանել սույն օրենքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կրծքով կերակրման կանոնները և պարբերաբար իրազեկել նշված կանոնների մասին կրծքով կերակրող մայրերին.

4) նորածիններին չտրամադրել ոչ մի տեսակի սնունդ կամ հեղուկ, բացի կրծքի կաթից՝ բացառությամբ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված դեպքերի.

5) մանկական սնունդ արտադրողներին և (կամ) բաշխողներին չտրամադրել հղիների և կերակրող մայրերի կոնտակտային տվյալներ.

6) մանկական սնունդ արտադրողների և (կամ) բաշխողների կողմից ցանկացած առաջարկի դեպքում (նմուշ, նվեր կամ այլ շնորհ) կամ սույն օրենքի նորմերի այլ խախտումների դեպքում տեղեկացնել առողջապահական կազմակերպության ղեկավարությանը.

7) բուժաշխատողները պարտավոր են մայրերին տրամադրել տեղեկատվություն մանկական սննդի օգտագործման հետ կապված առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների և ռիսկերի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ VIII

ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

Հոդված 20. Տեղեկատվական և ուսուցողական նյութերը մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների վերաբերյալ

1. Մանուկների և վաղ տարիքի երեխաների սնուցման վերաբերյալ գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական և ուսուցողական նյութերը պետք է՝

1) լինեն հայերենով, անհրաժեշտության դեպքում նաև այլ լեզուներով.

2) պարունակեն ճշգրիտ և արդի տեղեկատվություն և բացառեն որևէ նկար կամ տեքստ, որը խրախուսում է մանկական սննդի և հարակից ապրանքների օգտագործումը, շշով կերակրումը կամ չի նպաստում կրծքով կերակրմանը.

3) հստակ ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը.

ա. կրծքով կերակրման անհրաժեշտությունն ու առավելությունները,

բ. 6 ամիս բացառապես և դրան հետևող շարունակական (երկու տարի և ավելի) կրծքով կերակրման կարևորությունը,

գ. ինչպես սկսել և պահպանել բացառապես և շարունակական կրծքով կերակրումը՝ ներառյալ, թե ինչու է դժվար փոխել կրծքով չկերակրելու որոշումը,

դ. 6 ամսականից սկսած հավելյալ սննդի տրամադրման կարևորությունը,

ե. ինչու է շոշոկ կերակրման կամ հավելյալ սննդի վաղ տրամադրումը բացասաբար ազդում կրծքով կերակրման վրա,

զ. տնային պայմաններում հավելյալ սննդի պատրաստումը:

2. Մանուկների և վաղ տարիքի երեխաների սնուցման վերաբերյալ գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական և ուսուցողական նյութերը չպետք է՝

1) ներկայացնեն, թե իբրև մանկական սննդով կերակրելը կամ հարակից ապրանքներ օգտագործելը համարժեք է, համեմատելի է կամ գերազանցում է կրծքի կաթին կամ կրծքով կերակրմանը.

2) պարունակեն մանկական սննդի և հարակից ապրանքների ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ, կամ արտադրողի և (կամ) բաշխողի անվանումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը տրամադրվում է բուժաշխատողներին.

3. Մանկական սննդով կերակրման մասին գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական և ուսուցողական նյութերը՝ բացի սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված տեղեկատվությունից, պետք է ընդգրկեն նաև հետևյալ տեղեկատվությունը.

1) հրահանգներ մանկական սննդի պատշաճ պատրաստման և օգտագործման, ինչպես նաև հարակից ապրանքների լվացման և ախտահանման վերաբերյալ.

2) ինչպես կերակրել մանկանը կերակրման բաժակով.

3) շոշոկ կերակրման և մանկական սննդի ոչ ճիշտ պատրաստման հետ կապված հնարավոր հնարավոր առողջական վտանգները:

4. Կրծքով կերակրման խրախուսման ազգային ծրագրով նախատեսված մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների մասին տեղեկատվական և ուսուցողական նյութերը հրապարակվում են՝

1) լիազոր մարմնի կողմից լիազորված կազմակերպությունների միջոցով տվյալ տարվա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև տեղական և միջազգային ոչ կառավարական գործընկեր կազմակերպությունների միջոցների հաշվին.

2) այլ կազմակերպությունների կողմից՝ նյութերը լիազոր մարմնի հետ նախապես համաձայնեցնելուց հետո:

Լիազորման և նյութերի համաձայնեցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Լիազոր մարմինն իրավունք ունի արգելելու սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների մասին տեղեկատվական և ուսուցողական նյութերի հրապարակումը և տարածումը:

ԳԼՈՒԽ IX

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 21. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու համար

1. Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն:

ԳԼՈՒԽ X

ԵԶՐԱՓՈՒԿ 2 ՄԱՍ

Հոդված 22. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իննսուներորդ օրը, բացառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 15-րդ հոդվածի 1-ին մասի, որոնք ուժի մեջ են մտնում 2014 թ. հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ				
ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԿՐԾՔՈՎ ՍՆՈՒՑՄԱՆ ԽՐԱՄՈՒՍՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ				
	Առաջարկության հեղինակ	Նախագծի փոփոխվող մաս	Առարկության, առաջարկության բովանդակություն	Եզրակացություն
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «աջակցել» բառը:	Առաջարկն ընդունված է: Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից ևս հանվել է «աջակցել» բառը, իսկ 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «աջակցել» բառը փոխարինվել է «խրախուսել» բառով:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Հոդված 8-ի 1-ին մասի 3-դ կետում «կրթության» բառը փոխարինել «վերապատրաստմանը» բառով, նկատի ունենալով, որ խոսքը բուժաշխատողների աշխատանքային հմտությունների բարձրացման այլ ոչ թե օրենքով նախատեսված կրթություն ստանալու մասին է:	Առաջարկն ընդունված է մասամբ: Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «կրթությանն» բառը փոխարինվել է «կրթմանն» բառով:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Հոդված 10-ի 1-ին մասի 1-ին կետում «քրեակատարողական» բառից հետո լրացնել «հիմնարկներում» բառերը:	Առաջարկն ընդունված է

4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 12-րդ հոդված	Հոդված 12-ի 2-րդ մասի 1-ին կետը հակասում է առաջին մասին, նկատի ունենալով, որ առաջին մասում «խրախուսում» և «գովազդ» հասկացությունները տարբերակված են:	Առաջարկն ընդունված է: Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասում «գովազդը և խրախուսումն» բառերը փոխարինվել են «գովազդը և (կամ) խրախուսման այլ ձևերը» բառերով:
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 19-րդ հոդված	Հոդված 19-ի 1-ին մասի 7-րդ կետում «հնարավոր առողջական վտանգների» բառերը փոխարինել «առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների և ռիսկերի» բառերով:	Առաջարկն ընդունված է: Նշված փոփոխությունը կատարվել է նաև նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում և 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում:
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 20-րդ հոդված	Հոդված 20-ի 1-ին մասի 3-րդ կետի համարակալումը համապատասխանեցնել օրենսդրական տեխնիկայի պահանջներին:	Առաջարկն ընդունված է:
7.	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագիծ	Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասը, առաջարկվում է նախագծում կիրառվող հասկացությունները սահմանելիս կիրառել միևնույն տերմինները, մասնավորապես, որոշ հոդվածներում կիրառվում է «առողջապահական կազմակերպություն» բառերը, այլ հոդվածներում «բժշկական կազմակերպություն» բառերը, կամ սահմանել այդ երկու հասկացությունները՝ օրենքի նախագծի իմաստով: Նույն դիտողությունը վերաբերվում է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետություն օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին:	Առաջարկն ընդունված է: Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետում, 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետություն օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «բժշկական կազմակերպություն» բառերը փոխարինվել են «առողջապահական կազմակերպություն» բառերով:
8.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ա. Հովհաննիսյան	Նախագծի 4-րդ հոդված	«Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում՝ հասկացությունների շարքում, առաջարկում ենք քննարկել նաև այն առողջապահական կազմակերպությունների	Առաջարկն ընդունված է՝ նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր 17-րդ կետով. «17) առողջապահական կազմակերպություն՝ առողջապահական

			<p>հասկացությունը, որոնց վրա տարածվում է Օրենքի գործողության ոլորտը: Նման առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև օրենքի մի շարք հոդվածներում օգտագործվում է «առողջապահական կազմակերպություն» հասկացությունը, իսկ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը պատասխանատվություն է նախատեսում առողջապահական կազմակերպությունների կողմից մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքի, գովազդի և մի շարք գործողությունների համար, բայց Օրենքում առողջապահական կազմակերպությունների հասկացությունը ամրագրված չէ: Նման հանգամանքը կարող է տարբեր մեկնաբանությունների տեղիք տալ և գործնականում առաջացնել որոշակի խնդիրներ: Հետևաբար տարրն թերցումներից և տարբեր մեկնաբանություններից զերծ մնալու համար առավել նպատակահարմար է Օրենքում տալ այն առողջապահական կազմակերպությունների հասկացությունը, որոնց վրա տարածվում են Օրենքի դրույթները:</p>	<p>բնագավառում գործունեություն իրականացնող կազմակերպություն»:</p>
9.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ա. Հովհաննիսյան	Նախագծի 4-րդ հոդված	<p>Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում առաջարկում ենք քննարկել «բաշխում» հասկացության նախատեսումը: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև Օրենքում օգտագործվում է «բաշխող», «բաշխում» եզրույթները, սակայն բացահայտված չէ բաշխման էությունը, բաշխման մեջ ընդգրկվող գործողությունները:</p>	<p>Առաջարկն ընդունված է՝ նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետից հանվել է «բաշխմամբ» բառը:</p>

10.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ա. Հովհաննիսյան	Նախագծի 4-րդ հոդված	Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում առաջարկում ենք «նշանակում է» բառից հետո հանել «պիտակ»բառը: Նման առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդքան էլ նպատակահարմար չէ «մանկական սննդի և հարակից ապրանքների պիտակ»հասկացությունը մեկնաբանել պիտակ բառի միջոցով:	Առաջարկն ընդունված է: Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում «պիտակ՝ նշանակում է պիտակ» բառերը փոխարինվել են «պիտակ՝ նշագրում» բառերով:
11.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ա. Հովհաննիսյան	Նախագծի 16-րդ և 17-րդ հոդվածներ	Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ Է: ԿՐԾՔԻ ԿԱԹԸ ԿԱՏԱՐՅԱԼ ՍՆՈՒՆԴ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՌՈՂՋ ԱՃԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ: ԱՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՓՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «Նշումը պետք է զբաղեցնի պիտակի ծավալի ոչ պակաս քան 20 տոկոսը:» նախադասությամբ: Նման լրացման շնորհիվ ուղղակիորեն կսահմանվի,թե պիտակի որքան հատվածը պետք է ընդգրկի գրառումը, հակառակ դեպքում գործնականում հնարավոր է, որ կարևոր նշումը ընդգրկի միայն պիտակի շատ չնչին հատվածը և չնկատվի սպառողների կողմից:	Առաջարկն ընդունված է՝ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ				
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետություն օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 2-ում նշել, թե որ մասից հետո են լրացվում հոդվածի նոր մասերը:	Առաջարկն ընդունված է: Նախագծի 2-րդ հոդվածում «Օրենսգրքի 158-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով» բառերը փոխարինել «Օրենսգրքի 158-րդ հոդվածում 14-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 15-րդ, 16-րդ մասերով» բառերով:

2.	<p>ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ա. Հովհաննիսյան</p>	<p>Նախագծի 1-ին հոդված</p>	<p>«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «Մանկական սննդի եւ հարակից ապրանքների վաճառքը բժշկական կազմակերպությունների կողմից՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով» նախադասությունում «բժշկական» բառը առաջարկում ենք փոխարինել «առողջապահական» բառով: Նման փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ինչպես Օրենքում, այնպես էլ «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի նախագծում օգտագործվում է առողջապահական կազմակերպություն հասկացությունը, ուստի առվել նպատակահարմար է ամբողջ օրենքում օգտագործել մեկ միասնական հասկացություն, այն է՝ առողջապահական կազմակերպություն հասկացությունը:</p>	<p>Առաջարկն ընդունված է</p>
3.	<p>ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ա. Հովհաննիսյան</p>	<p>Նախագծի 1-ին հոդված</p>	<p>Օրենքի 1-ին հոդվածում «Մանկական եւ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, հարակից ապրանքների եւ մինչեւ 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի գովազդը և (կամ) խրախուսումն՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:» նախադասությունում «խրախուսումն» բառը փոխարինել «խրախուսման այլ ձևերը»: Նման փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գովազդը արդեն իսկ հանդիսանում է խրախուսման ձև և ընդգրկվում է խրախուսում հասկացության մեջ, ուստի նախագծում նման ձևակերպման առկայությունը այդքան էլ</p>	<p>Առաջարկն ընդունված է</p>

4.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ա. Հովհաննիսյան	Նախագծի 1-ին հոդված	<p>նպատակահարմար չէ:</p> <p>Առաջարկում ենք նախագծում քննարկել նաև հավելյալ սննդի գոլազդի կանոնների խախտման համար պատասխանատվության հարցը, քանի որ «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մասը թեև թույլատրում է հավելյալ սննդի գոլազդը, սակայն միան որոշակի պայմանների պահպանման դեպքում, ուստի այդ պայմանների խախտմամբ իրականացված գոլազդի համար ևս պետք է սահմանվի վարչական պատասխանատվություն:</p>	<p>Առաջարկն ընդունված է՝ նախագծի 1-ին հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով. «8. «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները չպահպանելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:» Այդ լրացման հետ կապված նախագծի 1-ին հոդվածի 9-րդ մասում «1-7 մասերով» բառերը փոխարինվել են «1-8 մասերով» բառերով:</p>
----	-----------------------------------	---------------------	---	--